Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

<<Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում>> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<Ծաղկունք բաց դպրոց>> հիմնադրամ

Թեմա՝ Խոսքի զարգացման աշխատանքները տարրական դասարաններում

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝ Արմինե Ստեփանյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....

ԳԼՈՒԽ I. Խոսքի տեսակները և զարգացման միջոցները: .....

1.1 Խոսքի տեսակները .....

1.2. Խոսքի զարգացման միջոցները.....

ԳԼՈՒԽ II. Խոսքի զարգացման աշխատանքները տարրական դասարաններում ..

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը:

Ժամանակակից դպրոցի առջև դրված կարևոր խնդիրներից է երեխաների բանավոր և գրավոր խոսքի զարգացումը, որի հիմքերը դրվում են տարրական դասարաններում: Տարրական դպրոցի յուրահատկությունն այն է, որ ուսումնական ողջ գործընթացը միտված է սովորողի ընդհանուր և ներդաշնակ զարգացմանը: Հանրակրթական դպրոցում անհրաժեշտություն է առաջանում կիրառել այնպիսի մեթոդներ, որի ընթացքում ցանկացած նյութի ուսումնասիրությանը պետք է մասնակցեն կրտսեր դպրոցականի ընկալման զգացական բոլոր ոլորտները: Այս առումով մայրենի լեզվի ուսուցումը ևս գրեթե վերառարկայական բնույթ և ուղղվածություն ունի, այսինքն՝ հիմնական շեշտը դրվում է ոչ թե հայոց լեզվի առանձին միավորների համակարգված ուսուցման, այլ ընդհանուր, կարելի է ասել նրա բաղադրիչների միաժամանակյա ուսումնասիրության վրա: Տարրական դպրոցում մայրենին դառնում է կրթական գործի և ուսումնառության մի օղակը, որի նպատակադրումները ևս անձի բազմաբնույթ մտածողության, ուշադրության և հիշողության, մտածողության և կապակցված խոսքի միաժամանակյա, անընդհատ և ներդաշնակ զարգացումն է:

Ուսումնասիրության առարկան կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման տեսական և մեթոդական հիմքերն ու աշխատանքներն են:

Աշխատանքի համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել երեխայի խոսքի զարգացման հոգեբանամանկավարժական դրույթները, մեթոդական մշակումները, խոսքի զարգացման տեսությունները:

Ուսումնասիրման նպատակը :

Գաղտնիք չէ՝ կարելի է ունենալ հարուստ բառապաշար, հրաշալի տիրապետել խոսք կառուցելու կանոններին, իմանալ քերականությունը, սակայն չունենալ գրագետ, տպավորիչ, համոզիչ, արտահայտիչ խոսք, եթե չունենանք հարուստ, բազմակողմանի զարգացած ներաշխարհ, ասելիք:

Ուսումնասիրության խնդիրներն են կրտսեր դպրոցականներին նպատակամղել հենց այդ ասելիքի որոնմանը: Մինչև մենք չազդենք սովորողի հոգու, ներաշխարհի և նրա ներքին ես-ի վրա, ուսուցման գործընթացում որևէ հաջողության չենք հասնի, քանի որ հարուստ է, արտահայտիչ և տպավորիչ այն մարդու խոսքը, ով ունի հարուստ, խորը, զգացմունքային ներաշխարհ և այդ ամենը մեկին հաղորդելու միջոցներ ու եղանակներ:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել կրտսեր դպրոցականի կապակցված խոսքի զարգացման մեթոդական հիմքերը, կրթական փաստաթղթերով ներկայացվող պահանջները, հիմնավորել դրանց իրականացման համար անհրաժեշտ արդյունավետ մանկավարժական պայմանները, զարգացնել դպրոցականների խոսքը՝ նպաստելով նրանց հոգեկան և բարոյական կերպարի ձևավորմանը:

Ուսումնասիրության մեթոդները հետևյալն են. թեմայի վերաբերյալ հոգեբանամանկավարժական մոտեցումների, գիտամեթոդական, լեզվաբանական ուսումնասիրությունների, մասնագիտական գրականության և կրթական փաստաթղթերի վերլուծություն, այդ ուղղությամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների փորձի ուսումնասիրում, հետազոտական աշխատանքների տեսական ընդհանրացում, հետազոտության մեթոդներ՝ դասերի դիտարկում, զրույց, հարցազրույց, հարցաթերթիկի կազմում, խոսքային երևակայության զարգացման աստիճանի ուսումնասիրման, երևակայության և մտածողության զարգացվածության աստիճանի բացահայտման մեթոդիկաների կիրառում, դասի պլանավորում և վարում:

Աշխատանքի տեսագործնական նշանակությունը կայանում է կրտսեր դպրոցականի խոսք զարգացման առանձնահատկությունների հիմնախնդրի շրջանակում տեսական նյութի ընդհանրացման մեջ: Հիմնավորվել է խոսքի զարգացման վրա ազդող գործոնները և կազմակերպման արդյունավետ միջոցները:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել դասավարների, ուսանողների կողմից՝ մայրենիի դասերի ընթացքում՝ նպաստելով կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

Ավարտական աշխատանքի կառուցվածքը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, երկու ենթագլուխներից ,եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից :

ԳԼՈՒԽ II. ԽՈՍՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1.1. Խոսքի տեսակները:

Խոսքի զարգացման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նկատառումներով պետք է հաշվի առնել խոսքի ձևերն ու տեսակները, դրանց փոխկապակցությունը և հարաբերակցությունը:

Խոսքն ունի հետևյալ տեսակները՝ արտաքին և ներքին, բանավոր և գրավոր:

Խոսքն ըստ արտաբերման եղանակի լինում է **արտաքին** և **ներքին**: **Արտաքին խոսքն** ունկնդիրներին ուղղված, արտասանված, հնչյունային ձև ընդունած խոսքն է: **Ներքին խոսքը** չարտասանած, հնչյունային ձև չընդունած, չգրված, «մտածված» խոսքն է: Այն ուղղված է ինքն իրեն: Ներքին կամ անհնչյուն խոսքը գրեթե նույնանում է մտածողության հետ: Բնականաբար, նախ ծագում է ներքին խոսքը, ապա նոր՝ արտաքինը:

Ներքին և արտաքին խոսքերի հիմքում ընկած են խոսքի օրգանների շարժումով պայմանավորված զգացողությունները: Ներքին խոսքի ժամանակ խոսքի օրգանների շարժումներն անձայն են: Դրանք իրարից տարբերվում են նաև ***բառապաշարով*** և ***քերականական միջոցներով:*** Ներքին խոսքն ավելի հակիրճ է, սեղմ, իսկ այդ նույն միտքը, երբ դառնում է արտաքին, ավելի է ընդարձակվում: Այն օգնում է ուսումնասիրվող նյութի հասկացմանը և մտապահմանը, ինչպես նաև արտաքին խոսքի զարգացման, մտածելու, մտածածն արտահայտելու, մտածելու գործընթացը վերահսկելու անհրաժեշտ պայման է: Սա նշանակում է՝ երեխային պետք է սովորեցնել նախ մտածել, հետո նոր խոսել:

Ի տարբերություն արտաքին խոսքի՝ **ներքին խոսքը** գրեթե զրկված է հատուկ քերականական ձևերից, այն հիմնականում հենվում է հասկացությունների, առանձին հենակետային բառերի և ամբողջական բառախմբերի ու բառերի համակցությունների վրա: Ներքին խոսքի մակարդակում իրականանում են նոր գիտելիքների ընկալումը, յուրացումը, իմաստավորումը, առաջադրված հիմնախնդիրների լուծումը, բանավոր շարադրանքը, հատկապես՝ գրավոր խոսքի նախապատրաստումը:

Արտաքին խոսքի տեսակներն են **մենախոսությունը** և **երկխոսությունը**: **Երկխոսության** ամենատիպական տարբերակը զրույցն է մարդկանց միջև: Մենախոսությունն արտահայտված միտք է՝ ուղղված բազմաթիվ ունկնդիրների: Այն խոսողից պահանջում է մտքի բովանդակայնություն, կոնկրետություն, հստակություն, կենտրոնացվածություն,

արտահայտչականություն։ Դպրոցական մենախոսությունները կարդացածի պատմումն են, նկարների կամ հանձնարարված թեմայի շուրջ պատմությունների հյուսումը, ելույթները, բանավոր շարադրությունները և այլն։

Արտաքին խոսքն ունի դրսևորման երկու ձև՝ ***գրավոր և բանավոր:***

Բանավոր խոսքը հնչյունային է, այն բնութագրվում է արտահայտչական որոշակի միջոցներով՝ տեմպ, հնչերանգ, ձայնի բարձրություն, դադար, տրամաբանական և հոգեբանական շեշտեր, ժեստերի և դիմախաղերի օգնությամբ արտահայտվող զգացմունքային երանգներ և այլն։

Բանավոր խոսքը ծառայում է մարդկանց միջև որպես հաղորդակցման հիմնական միջոց, իսկ գրավոր խոսքը առաջանում է մտքերի փոխանցման ոչ անմիջական հաղորդակցման պահանջից: Այն բանավոր խոսքի վերարտադրումն է գրելու միջոցով և գրաֆիկական տեսքով տեղեկատվությունն է տառերի օգնությամբ:

Ներքին խոսքը չհնչող, մտքում կատարված, հնչյունային ձև չընդունած, մտածվող խոսքն է: Դա ծնվում է այն պահին, երբ մենք մտում մտածում ենք ինչ-որ բանի մասին, մտքում լուծում ենք որևէ խնդիր, հիշում որևէ խոսակցություն: Նման դեպքերում մենք մտածում ենք բառերի օգնությամբ, որոնք լսելի չեն, բայց արտադրվում են մեր մտքում:

Մարդու գիտակցական ու մտավոր գործունեության համար կարևոր նշանակություն ունի ներքին խոսքը, քանի որ մարդը ներքին խոսքի շնորհիվ է կառուցում իր արտաքին խոսքը և այն արտահայտում բանավոր մեկնաբանությունների միջոցով: Մարդը, մինչև լսելի ձևով արտահայտվելը, մտածում է, խորհում, կշռադատում իր ասելիքի մասին, որոնում և գտնում արտահայտման համապատասխան միջոց ու եղանակ:

Լևոն Հախվերդյանը նշում է. «Լեզուն մտածողության հետ կապված է անմիջաբար: Ավելին՝ մտածել, արդեն իսկ նշանակում է խոսել, միայն թե մտքում խոսել: Մարդիկ առհասարակ մտածում են մտքում խոսելով: Համոզվելու համար փորձենք որևէ բան մտածել առանց բառերի: Ինչքան էլ ջանք դնենք՝ բան դուրս չի գա: Ասենք, գիշերը երազ եք տեսել և առավոտյան ուզում եք մտաբերել, թե ինչ եք տեսել: Դուք մտաբերում եք բառերով: Դա կարող ենք նաև գրի առնել, որի շնորհիվ ձեր մտավոր խոսքը կդառնա գրավոր խոսք: Լեզվաբանները սա կոչում են ներքին խոսք»[1]:

Այսպիսով՝ ներքին և արտաքին խոսքի վերաբերյալ կարող ենք ասել, որ դրանք կապակցված են միմյանց հետ:

[1] Հախվերդյան Լ. Զրույցներ լեզվի մասին, Եր., 1986, էջ 6:

Ուսուցչի ասածը, որպես արտաքին խոսք, աշակերտները կրկնում են մտքում, վերարտադրում գրավոր կամ բանավոր: Այս տեսանկյունից առանձնապես կարևոր է ուսուցչի գեղեցիկ, հուզական խոսքի և գեղարվեստական գրականության ներգործությունը, քանի որ խոսքը ոչ միայն հաղորդակցական, այլ նաև ներգործության հզոր միջոց է հանդիսանում: Այստեղ խոսքը դառնում է խթանիչ մեծ ուժ, որը պետք է կարողանա օգտագործել ուսուցիչը ոչ միայն ուսուցողական, այլև դաստիարակչական նպատակներով՝ ներգործող և համոզող զրույցների միջոցով:

Ներքին խոսքի զարգացմանը նպաստում է առաջարկվող հարցին մտքում պատասխան պատրաստելը՝ այնուհետև արտաքին խոսքով արտաբերելը:

Ըստ նշանակության խոսքը լինում է պատմողական, նկարագրական, դատողական և գնահատող:

Պատմողական խոսքը ընթերցած նյութի պատմելը կամ վերարտադրելն է՝ առարկաների կատարած գործողությունների, ընթերցած ստեղծագործության գործող անձանց արարքների, նրանց գործունեության մասին որոշակի հաջորդականությամբ հաղորդումն է: Բնագրի վերնագիրը պատմողին պիտի հուշի՝ ***ո՞ւմ*** կամ **ինչի՞** մասին պիտի պատմի և ներկայացնի, թե **ի՞նչ** է տեղի ունենում:

Նկարագրական խոսքը առարկայի կամ երևույթի համալիր հատկանիշների մասին միաժամանակյա հաղորդումն է, նկարագրությունը: «Այդ հատկանիշները կարելի է տեսնել միանգամից՝ բոլորը միասին, ինչպես մեկ լուսանկարում կամ նկարչի կտավի վրա, կինոժապավենի մեկ կադրում»[2]: Առարկայի, մարդու, երևույթի, տեսարանի հատկանիշները կարելի է ներկայացնել՝ պայմանավորված խոսողի հետապնդած նպատակներով, ինչ նպատակ է հետապնդում, ինչն է կարևորում, հատկապես որ հատկանիշի վրա է կամենում հրավիրել ունկնդրի (ընթերցողի) ուշադրությունը: Սակայն կառուցվածքային գծակարգը շատ նկարագրությունների համար նույնն է:

Կրտսեր դպրոցական տարիքում կարևոր և երկարատև աշխատանք է պահանջում դատողական խոսքի զարգացումը:

Բացատրվող, մեկնաբանվող, ապացուցվող մասը պիտի բավականին հիմնավոր լինի՝ ձևակերպված բարդ նախադասությամբ, համոզիչ, զրուցակցի համար հասկանալի: Դատողական խոսքը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝ բացատրվելիք, ապացուցվելիք

[2] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2015, էջ 265:

փաստը ներկայացնող խոսք, բացատրությունը, ապացույցը, դատողությունը ներկայացնող խոսք, եզրակացություն, գնահատում:

Դիտելով մեզ շրջափակող իրականությունը՝ մենք հաճախ դատողություններ ենք կատարում առարկայի, մարդու գործողության, միջավայրի վիճակի, մարդկանց արտաքինի, վարքի մասին:

Գնահատող խոսքը զարգանում է դատողական խոսքին զուգահեռ: Գնահատումը սուբյեկտիվ խոսք է: Այն ձևավորվում է տարաբնույթ զգացմունքային-արտահայտչական և քերականական միջոցներով, որոնք օգնում են ունկնդրին հասկանալ խոսողին: Խոսքի զգացմունքային-արտահայտչական միջոցների յուրացումն օգնում է ըմբռնել մարդու ներաշխարհի ազդեցությունը լեզվի վրա, իմանալ, թե ինչպես է մարդն արտահայտում իր զգացմունքները, իրականությանը տված գնահատականը:

Սրանցով էլ պայմանավորված՝ իբրև գնահատող խոսք օգտագործվում են տարաբնույթ չափազանցությունները և փոխաբերությունները, որոնք լավագույնս արտահայտում են խոսողի (գրողի) սուբյեկտիվ վերաբերմունքը[3]:

Գնահատող խոսքին հատուկ է որոշակի բառապաշար՝ ինքնատիպ շարահյուսական կառույցով: Օրինակ՝ հսկա կառուցվածքով մարդուն կարող են անվանել փիղ, փոքրամարմնին՝ եղնիկ, մուկիկ, երկարահասակ աղջկան՝ բարդի, կեչի, խորամանկին՝աղվես, թաքնվածին՝ խլուրդ և այլն[4]:

Խոսքը մտքի գեղանկարչությունն է, նրա գեղագիտական դրսևորումը, իսկ գրագետ և գեղեցիկ խոսքը մտքի կազմակերպվածության արտահայտությունն է: Բանավոր խոսքն իր արտահայտչականությամբ ավելի բնական ու ազդեցիկ է, քան գրավոր խոսքը և ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում լսողին փոխանցելու հույզերն ու ապրումները, տրամադրությունը և զգացմունքները:

Բանավոր խոսքի համեմատ գրավոր խոսքը ձևավորվում է միայն նպատակաուղղված ուսուցման ճանապարհով, գրավոր խոսքի ձևավորման ուղղությամբ աշխատանքներն սկսվում են դեռես գրաճանաչության շրջանում և կատարելագործվում են հետագա ուսուցման ընթացքում:

---

[3]Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2015, էջ 266:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 267:

Գրավոր խոսքի ձևավորման համար անհրաժեշտ է յուրացնել քերականությունը, ուղղագրությունը և շարահյուսությունը:

Հոգեբանները նշում են, որ 6-7 տարեկան հասակի կրտսեր դպրոցականից գրելու ժամանակ պահանջվում է մկանային լարվածություն: Այսինքն՝ նրանք ֆիզիկական մեծ ջանքեր են գործադրում և բավական էներգիա ծախսում, կատարում գլխի, ձեռքերի, ոտքերի և իրանի անհանգիստ, լարված շարժումներ:

Գրավոր խոսքի կարևոր բաղադրիչներից են բառապաշարը, քերականությունը և խոսք կառուցելու կարողությունը: Սրանք առաջին հերթին կապված են բանավոր խոսքի հետ, որպես հաղորդակցման հիմնական միջոց, այնուհետև խոսքի դրսևորման մյուս ձևերի հիմք են դառնում: Եթե համեմատենք գրավոր և բանավոր խոսքը, ապա կտեսնենք, որ գրավոր խոսքը բառապաշարի հարստությամբ, քերականական ձևերի ճշտությամբ, խոսք կառուցելու կարողությամբ բանավոր խոսքի համեմատ ավելի անթերի է: Գրավոր խոսքի առանձնահատուկ կողմերից է վայելչագրությունը, ուղղագրությունը և կետադրությունը, առանց որոնց գրավոր խոսքը զուրկ կլինի հաղորդակցման ընդհանուր միջոց լինելուց:

Տարրական դպրոցի աշակերտների գրավոր և բանավոր խոսք կառուցելու կարողությունների ձևավորման և զարգացման նպատակով օգտագործվում են գրավորի չորս հիմնական տեսակները՝ **արտագրություն, թելադրություն, փոխադրություն** և **շարադրություն:**

Տարրական բոլոր դասարաններում օգտագործվում են արտագրություններն՝ իրենց տարատեսակներով՝ ընդօրինակման և ստեղծագործական: Ընդունված են արտագրություններ ինչպես դասագրքից և գրատախտակից, այնպես էլ ձեռագիր տեքստից:

Սովորաբար արտագրելու ուղղությամբ հանձնարարություններ տրվում են առաջին դասարանի գրաճանաչության շրջանից: Արտագրելու առաջադրանքը կրտսեր դպրոցականի համար բավականին բարդ հանձնարարություն է, այն կատարելու համար աշակերտը պիտի իրականացնի մի քանի մտավոր գործողություն կարդա բնագիրը, այն հասկանա, իմաստավորի, արտագրի՝ պահպանելով ինչպես ուղղագրական, այնպես էլ վայելչագրական կանոնները: Արտագրությունը մեխանիկական աշխատանք չէ, ինչպես հաճախ կարծում են ոմանք:

Թելադրություններ գրելիս աշակերտները գիտակցում են հայերենի գության և արտասանության միջև եղած տարբերությունները, սովորում ուղղագրության, կետադրության, քերականության կանոնները, հարստանում է երեխաների բառապաշարը և խոսք կառուցելու կարողությունը:

Ըստ անցկացման բովանդակության, ընդունված են երկու խմբի թելադրություններ՝ **սովորական** և **ստեղծագործական,** իսկ ըստ անցկացման նպատակի՝ **բացատրական** և **ստուգողական**:

Սովորական թելադրություններ անցկացնելու նպատակը երեխաներին թելադրված նյութն անսխալ գրի առնել սովորեցնելն է, որի միջոցով աշակերտների մեջ աստիճանաբար ձևավորվում է լսածը գրագետ գրի առնելու ունակություն:

Տարրական դպրոցում կիրառելի է սովորական թելադրությունների 3 տեսակ *հնչյունային, նախազգուշական և ինքնաթելադրություն:*

Գրավոր խոսքի զարգացման մյուս տեսակը փոխադրությունն է: Փոխադրությունները խոսքի զարգացման միջոց են: Այս տեսակի միջոցով աշակետը վերարտադրում է իր լսած կամ կարդացած նյութը՝ առանց բովանդակությունը փոխելու, առանց քննադատելու և դատողություններ անելու: Այն յուրօրինակ միջոց է՝ հեղինակից խոսք կառուցելու պատրաստի նմուշներ վերցնելու համար:

Գրավորի այս տեսակը (նախ՝ բանավոր պատմելով, ապա նույնը գրավոր շարադրելով) հարստացնում է աշակերտի խոսքը: Միաժամանակ այս ճանապարհով նա գրողից կարծես թե վերցնում է խոսք կառուցելու դասեր հանդես բերելով ակտիվ նախաձեռնություն:

Որպեսզի փոխադրություն գրելու գործընթացը զարգացնի երեխայի կապակցված խոսք կառուցելու և այն գրի առնելու կարողությունը և ոչ թե դառնա ունկնդրածի մեխանիկական վերարտադրություն, փոխադրության համար ընտրված նյութի գաղափարը՝ հիմնական միտքը, աշակերտը պետք է հասկանա, զգա դեպքերի տրամաբանական կապերը և «իր բառերով» վերարտադրի:

Որքան էլ որ ունկնդրած նյութի բովանդակությունը փոխադրելիս կարևորվում է աշակերտի ինքնուրույն խոսքը, այնուամենայնիվ, պիտի աշխատանք տանել, որ աշակերտը որոշ հեղինակային բառեր, արտահայտություններ, մտքեր վերարտադրի հարազատ մնալով հեղինակի ոճին և լեզվին: Բնագրի շուրջ տարվող մեթոդապես ճիշտ աշխատանքի միջոցով դրանք կդառնան աշակերտներինը՝ անշուշտ ապահովելով ինքնուրույնություն, սերմանելով ստեղծագործական գործունեության տարրեր: Որքան էլ որ փոխադրություն գրելիս տեղ տրվի երեխաների ստեղծագործական մտքին և վերլուծական մտածողությանը, այնուամենայնիվ, աշակերտները պետք է տրված խոսքի նմուշից օգտագործեն այն բառերը, արտահայտությունները, որոնք աշակերտներն հանդիպում են առաջին անգամ, որպեսզի պահպանվեն ստեղծագործության իմաստային առանձնահատկությունները, և աշակերտների

խոսքը հարստանա դրանցով: Որպեսզի փոխադրության համար ընթերցած նյութի տպավորությունը չխամրի, անհրաժեշտ է չձգձգել փոխադրությանը նախապատրաստող աշխատանքը, և աշակերտներին անմիջապես մղել վերարտադրելու՝ հետամուտ լինելով, որ աշակերտները թափանցեն նյութի ենթաշերտերի մեջ:

Սովորաբար տարրական դասարաններում կիրառվում են փոխադրության հետևյալ տեսակները. բնագրին հարազատ կամ մանրամասն, համառոտ, ընտրովի, ստեղծագործաբար:

Շարադրությունը ևս գրավոր խոսքի տեսակ է, որը կիրառելի է և՛ տարրական և՛ միջին ու բարձր դասարաններում: Շարադրությունները ուսուցողական վարժություններ են, որոնք բացահայտում են աշակերտների լեզվական կարողությունները, քերականական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունները, ինչպես նաև զարգացնում են երեխաների ստեղծագործական մտածողությունը**:**

Որևէ ամբողջական նյութի շարադրումն իրենից ներկայացնում է խոսքային գործունեության երկու տեսակների՝ մտածելու (ներքին խոսք) և մտածածն արտահայտելու՝ շարադրելու (արտաքին խոսք) համակցում: Այսինքն՝ շարադրություն գրելու գործընթացն իրականանում է իրար հաջորդող և իրար լրացնող այդ երկու պահի ներդաշնակությամբ, նախ շարադրելիքը մտմտալով, խոսքը մտքում «պատկերացնելով», ապա մտածածը վերարտադրելու առավել համարժեք ձևի ընտրությամբ:

Մտքում ծրագրվածի հիման վրա տեքստի ստեղծումը իրականանում է պատմելու և պատմածը գրավոր շարադրելու գործընթացներով, որոնք կատարվում են իմաստավորում-հիշողության մեջ մտապահում-վերարտադրություն ընթացքով:

Շարադրությանը նախապատրաստվելու հիմնական քայլերն են ՝նյութի հավաքում, մշակում, մտքերի հաջորդականության որոշում, օգտագործվող բառերի ուղղագրության ճշտում, քերականական օրինաչափությունների կրկնում, հարցաշարի (պլանի) կազմում:

Կարևոր է նաև շարադրության վերնագրի ճիշտ ընտրությունը: Շարադրությունների վերնագրերն ընտրելիս պիտի նկատի ունենալ, որ ըստ նյութի հավաքման սկզբնաղբյուրի շարադրությունները գրվում են ա) ապրածի, տեսածի, լսածի հիման վրա, բ) ընթերցած նյութի, դիտած նկարի, կինոնկարի, ներկայացման, էքսկուրսիայի, ցերեկույթի տպավորության հիման վրա, գ) տարբեր աղբյուրներից ձեռք բերած տեղեկատվության հիման վրա:

Ըստ կազմակերպման ձևի՝ շարադրությունները լինում են **խմբային** և **անհատական**:

Շարադրություններն ուսուցողական վարժություններ են, որոնք բացահայտում են աշակերտների ունեցած լեզվական կարողությունները, քերականական գիտելիքները գործնականում կիրառելու ունակությունները:

1.2. Խոսքի զարգացման միջոցները

Յուրաքանչյուր առարկայի դասավանդման մեթոդիկա հենվում է դիդակտիկայում մշակված ավանդական մեթոդների վրա, որոնք դասակարգվում են՝ հիմք ընդունելով դրանց իրականացման ժամանակ օգտագործվող միջոցները, ***գնակականությունը, բառը, խոսքը*** և սովորողների ***գործունեությունը:***

Ուսուցման արդյունավետության բարձրացման պայմաններից մեկը ուսուցչի կողմից բազմազան մեթոդների կիրառումն է, դրանց ներդաշնակ համադրումն ու տրամաբանական անցումները մեկից մյուսին: Այս իմաստով արդյունավետ են պարզ, կազմակերպական մեծ նախապատրաստություն, միջոցներ և նյութեր չպահանջող մեթոդական հնարները: Սրանք ինքնուրույն կամ անկախ կիրառություն ունեն, սակայն ավարտուն, վերջնական արդյունքներ ստանալու նպատակով հաճախ ներառվում են ավելի ամբողջական մեթոդների կազմում:

Ուսուցման գործընթացում մեթոդների, մեթոդական հնարների մի քանի առավել գործածական տեսակները հավասարապես կարող են օգտագործվել ցանկացած առարկայի դասավանդման տարբեր փուլերում:

Ուսուցման և ուսումնառության ընթացքում գործածվող մեթոդների ու հնարների նպատակն է՝ գիտելիքների ձեռքբերման, կարողությունների ու հմտությունների ձևավորման ընթացքում աշակերտներին հնարավորություն տալ արտահայտվելու, քննարկելու կարդացածի կամ սովորածի արդյունքում ծագած մտքերը, հարցեր տալու և պատասխանելու, ինչպես նաև լսելու իրենց արտահայտած մտքերի արձագանքը: Երբ երեխային առաջարկվում է թղթին հանձնել ծագած մտքերը, շատ կարևոր է նրան առաջարկել գրանցման, համակարգման և դասակարգման հնարներ ու ձևեր, որոնք շատ օգտակար կլինեն հետագայում դրանց շուրջ քննարկումներ անցկացնելիս[5]:

[5] Արնաուդյան Ա. և ուրիշներ, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., 2004, էջ 28:

Մայրենիի ուսուցման ընթացքում կիրառելի են բազմաթիվ մեթոդական հնարներ, որոնք խոսքի զարգացման լայն հնարավորություններ են ընձեռում:

Ուսուցման մեթոդներն ավանդաբար բաժանվում են 3 խմբի՝ ***զննական, խոսքային և գործնական,*** որոնք հիմնականում հանդես են գալիս փոխկապակցված:

Զննական մեթոդները տարրական դպրոցում հաճախակի են օգտագործվում, որոնցից առավել հաճախ կիրառվում են ավելի շատ դիտման մեթոդը և նրա տարատեսակները: Կիրառվում է մասնավորապես իրազննությունը (խաղալիքներ, նկարներ, լուսանկարների դիտում, առարկաների նկարագրում, դիդակտիկ խաղեր, նկարների շուրջ պատմումներ և այլն), որն օգտագործվում է գիտելիքների ամրակայման, բառապաշարի հարստացման, կապակցված խոսքի զարգացման նպատակներով:

Դասերի ընթացքում կարելի է կատարել մի շարք առաջադրանքներ, կազմակերպել խաղեր, որոնց ընթացքում կկիրառենք վերոնշված մեթոդները:

Խոսքային մեթոդները տարրական դպրոցում նույնպես լայն կիրառություն ունեն, գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցումն ու պատմումը, արձակ և չափածո ստեղծագործությունների անգիր անելը, զրույցները, բանավեճերը և այլն: Խոսքային բոլոր մեթոդների ժամանակ կարելի է օգտագործել նաև վերոնշյալ դիտողական պարագաներ:

Գործնական մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների ձեռք բերած գիտելիքների կիրառմանը, խոսքային ունակությունների ու կարողությունների կիրառման կատարելագործմանը: Գործնական մեթոդների թվին են պատկանում տարաբնույթ **խոսքային** վարժությունները, **լեզվական** խաղերը, խաղ-բեմականացումները և այլն:

Տարրական դպրոցում ուսուցման հիմնական ձևը խաղն է: Սա ուսումնական գործունեության այն տեսակն է, որի ընթացքում ապահովվում է երեխայի բոլոր զգայարանների մասնակցությունը, հետևաբար նաև ընկալման գործընթացի, մտածողության և խոսքի ձևավորումն ու զարգացումը: Բացի դրանից՝ խաղի միջոցով լուծվում է ուսման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու շատ կարևոր նպատակադրումը:

Խաղը գործունեության այն ձևն է, որի մեջ երեխաները մոդելավորում են մարդու գոյության իմաստը և հարաբերությունների այն տեսակները, որոնք կան հասարակության մեջ:

Տարրական դպրոցի շատ ուսուցիչների հաջողության գաղտնիքը երեխաների ներաշխարհի, նրանց փորձի, երևակայության և դրա հիման վրա ձևավորված խոսքի տեղին կիրառությունն է: Դասվարը հետևում և զարգացնում է սովորողի՝ խոսքով դրսևորվող խաղի ընթացքը, բայց տանում է ուսումնական խնդիրների լուծման ճանապարհով: Սակայն աստիճանաբար ուսուցիչը, խթանելով երեխայի խաղային գործունեությունը, նրան առաջնորդում է դեպի ուսումնառության ոլորտը, որպեսզի նա ձևավորվի որպես դպրոցական և կարողանա անգիտակից խաղացողից վերաճել ուսումնասիրող և հետազոտող, ինքնուրույնաբար գիտելիք ձեռք բերող, սովորել իմացող, վերլուծական-քննադատական մտածողությամբ օժտված անհատականության:

Հաշվի առնելով, որ այս տարիքում աշակերտները մայրենի լեզուն գործածում են որպես հաղորդակցական միջոց՝ չգիտակցելով լեզվի տեսական համակարգը, դասերի կարելի է կազմակերպել բազմաբնույթ մտածողության տարրերը ներառելով, որը կնպաստի նրա մտքերը մայրենի լեզվով արտահայտելու համակարգի մասին որոշ տեսական գիտելիքների տարրեր յուրացնելուն:

Ըստ Հ. Գարդների բազմաբնույթ մտածողության տեսության՝ լեզվի ուսուցման այն խնդիրները, որոնք դրվում են դասերը նման ձևով կազմակերպելու հիմքում, հաշվի են առնում երեխաների հետաքրքրությունների, հակումների, շահագրգռվածության, առավել լայն շրջանը: Այս ամենի արդյունքում զարգանում է երեխաների խոսքի մշակույթը՝ իր հստակությամբ, ստեղծագործական-երևակայական դրսևորումներով:

ԳԼՈՒԽIII. Խոսքի զարգացման աշխատանքները տարրական դասարանում:

Ուսումնական գործունեության ընթացքում ամենակարևոր խնդրիներից մեկը աշակերտների խոսքի զարգացումն է, հաղորդակցվելու կարողության ձևավորումը, քանի որ մարդու հիմնական յուրահատկություններից մեկը հաղորդակցվելու ընդունակությունն է. խոսքի միջոցով են իրագործվում բարձրագույն հոգեկան գիտակցական գործընթացներն ու շփման առավել կատարյալ, սոցիալական տեսակետից անհրաժեշտ ձևերը: Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, և այն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է ճիշտ կազմակերպված աշխատանք, որի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սովորողը գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ ստանում է իր կյանքի հետագա գործունեության համար անհրաժեշտ

սոցիալական փորձ: Ուսումնառության ընթացքում իրականացվում է երեխայի հոգեկանի զարգացումը, ձեռք է բերվում գիտելիք: Կրթության հետ միաժամանակ երեխան պետք է դառնա նախաձեռնող, կարողանա ինքնուրույն հետազոտել, ստեղծագործել, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում, փոխանցել իր իմացածը, ձեռք բերել հաղորդակցական, համագործակցային կարողություններ և ինքնուրույնություն: Կրտսեր դպրոցական տարիքը գիտելիքների կուտակման տարիք է, և այս տարիքի երեխաները պատրաստակամ են գիտելիքներ ձեռք բերելու հարցում: Ուսուցման հիմքը դրվում է ուսումնառության սկզբնական շրջանում և այնուհետև շարունակվում դպրոցական ողջ տարիների ընթացքում, և ոչ միայն... Նոր դպրոց մտնող երեխայի խոսքի զարգացման աշխատանքներն իրականացվում են լեզվական տարրական գիտելիքների ուսուցման միջոցով, որի ընթացքում լուծվում են աշակերտի խոսքի զարգացման մի շարք խնդիրներ՝ հնչյունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը, ճիշտ շեշտադրումը, բառակապակցություններ, ապա նախադասություններ կառուցելու կարողությունը, բառիմաստի ընկալման, ճիշտ կիրառման և պատկերավոր խոսք կառուցելու կարողությունը: Ամրապնդման համար համապատասխանաբար կատարվում են ճանաչողական և կիրառական վարժություններ: Սկսած նախաայբբենական շրջանից՝ աշակերտներին գաղափար է տրվում բանավոր և գրավոր խոսքի մասին, պատումի, նախադասության մասին, զարգացվում նրանց տեսողական-պատկերային մտածողությունը, ձևավորվում մտքերը հասկանալի և ճիշտ ձևակերպելու, հաղորդակցվելու, ինքնարտահայտվելու կարողություններ: Ուսուցման ընթացքում ուսուցիչը կրտսեր դպրոցականների առջև խնդիր է դնում իր կողմից առաջադրվող հարցերին տալ լիարժեք և տրամաբանված պատասխաններ, խոսել ճիշտ ու գրագետ, խուսափել անհարկի կրկնություններից: Հատկապես ուշադրություն պետք է դարձնել, որ աշակերտը ազատ և անկաշկանդ մտածի և հաղորդակցվի, կարողանա հասկանալ տրված հարցերը և ճշգրիտ պատասխանել դրանց, կարողանա ճիշտ կողմնորոշվել խոսքային իրադրության մեջ: Երեխային առաջարկում ենք պատմել իր, ընտանիքի, ընկերների, սիրելի իրի և այլ առարկաների կամ երևույթների մասին, սովորեցնում համեմատել և գտնել առարկաների նմանություններն ու տարբերությունները և այլն, ձևավորում ենք դիմացինի խոսքը լսելու կարողություն: Աշխարհաճանաչողական տեղեկությունների միջոցով զարգացնում ենք խոսքն ու մտածողությունը, նոր բառերի միջոցով հարստացնում բառապաշարը: Հետայբբենական շրջանում աշխատանքներ են տարվում խոսքի, բառի, նախադասության և տեքստի շուրջ, գործնականում կիրառում լեզվական նախնական գիտելիքները: Օրինակ՝ բառի մասին գաղափար կազմելու համար աշակերտներին հարցնում ենք, թե ինչ են տեսնում իրենց շրջապատում, աշակերտները սկսում են անվանել տարբեր առարկաներ, այնուհետև հարցնում ենք, թե ինչպես են տարբերում այդ առարկաները, աշակերտները անվանում են առարկաների տարբեր հատկանիշներ, բնութագրում են դրանք, ասում, թե որ առարկան ինչի համար է: Բառի մասին գաղափար տալուց հետո կատարում ենք եզրահանգում, որ յուրաքանչյուր առարկա ունի իր

անվանումը, ամեն բառ ունի իր նշանակությունը, իմաստը: Երեխաներին բացատրում ենք, որ բառը պետք է անպայման իմաստ ունենա, որ հնչյունների ամեն կապակցություն բառ չՏարրական դասարաններում բառապաշարի հարստացման միջոցով պետք է ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, հարստացնել գիտելիքները: Այդ աշխատանքներն իրականացվում են բառակազմական, բառի մասին բացատրման և նրա ճիշտ գործածման վերաբերյալ վարժությունների, հոմանիշների, հականիշների դուրսգրման միջոցով: Այդ նպատակով կատարում ենք ճանաչողական, կիրառական և ստեղծագործական բնույթի վարժություններ: Կրտսեր դպրոցականին պետք է վարժեցնել տեքստում ճանաչել նոր բառը, բառարանում գտնել նորածանոթ բառի բացատրությունը, այն կիրառել խոսքում՝ կազմելով բառակապակցություններ, նախադասություններ: Այս գործընթացը պետք է կրի շարունակական բնույթ, որպեսզի աշակերտի մեջ ձևավորվի նյութի մեջ նոր բառի ճանաչման ու ընկալման կարողություն: Նմանատիպ աշխատանք պետք է կազմակերպել թե՛ դասարանական, թե՛ արտադասարանական ընթերցման ժամանակ: Այս տարբերակը լայն հնարավորություն է տալիս աշակերտին անընդհատ և բազմակողմանիորեն հարստացնելու բառապաշարը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնառության տարիներին ուսումնասիրվում են տարբեր առարկաներ, որոնց դասագրքերը մի մեծ բառարան են բառապաշարի հարստացման համար: Կրտսեր դպրոցական տարիքում կարևոր գործառույթ է երեխայի մտածողության զարգացումը, պատկերավոր մտածողությունից վերացական մտածողության անցումը, սակայն այդ ամենը պետք է իրականացնել կոնկրետ փաստերի, ակնառու նյութերի հիման վրա, որպեսզի այն հասանելի լինի աշակերտի դատողական մտածողությանը: Իհարկե, հետագայում աստիճանաբար պատկերներով աշխատելու ծավալը պետք է կրճատվի: Տարրական դպրոցում կարևոր խնդիր է հիշողության զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը: Կրտսեր դպրոցականներից շատերն օժտված են մեխանիկական հիշողությամբ և ուսուցման ընթացքում բավականին հեշտ անգիր են անում ուսումնական տեքստերը: Հաճախ են հանդիպում այնպիսի երեխաներ, որոնք նյութը վերարտադրելիս այն կարդում են «օդում»՝ դասագրքի նյութը մտովի բերելով տեսողական դաշտ: Աշակերտների խոսքը զարգացնելու համար հանձնարարվում են կազմել նախադասություններ, հորինել պատմություններ որևէ նկարի, սեփական դիտումների վերաբերյալ: Հետաքրքրություն մտցնելու համար խմբակային կամ անհատական տարբերակով կարող ենք տալ ուսուցանվող թեմային վերաբերվող անգույն նկար, հանձնարարել, որ նրանք հորինեն պատմություն նկարի շուրջ, մեկնաբանեն այն, ապա գունազարդեն նկարը, քանի որ նկարելու ընթացքում երեխան ևս մեկ անգամ վերհիշում է կարդացածը, մտքում պատմում, մտորում երևույթի շուրջ, ինչը հնարավորություն է տալիս զարգացնելու երեխայի ներքին խոսքը1 : Այս եղանակով կզարգանա աշակերտների վերացական մտածողությունը, և նրանք իրենց մտածածն ու զգացածը կարող են ներկայացնել ոչ միայն նկարի միջոցով, այլ նաև խոսքով: Ավարտված աշխատանքները կպահվեն հատուկ թղթապանակում կամ ստեղծագործական անկյուն կստեղծվի

դասարանում: Կարծում եմ՝ նմանատիպ աշխատանքը կաշխուժացնի աշակերտներին և կխթանի նրանց ստեղծագործելու ցանկությունը: Ուսուցումը տանելով խաղին զուգահեռ, կոգևորենք երեխային՝ սովորելը նրա համար դարձնելով ուրախ ու հետաքրքիՆմանատիպ աշխատանք կարելի է իրականացնել բնության երևույթների, տարվա եղանակների թեմայի ուսուցման ժամանակ՝ նկարը գունազարդելով դասի բնութագրական հատվածներին համապատասխան: Այս տարբերակը կարելի է կիրառել նաև էլեկտրոնային ուսուցման միջոցով: Այսպես՝ էկրանի վրա տեղադրված անգույն նկարը գունավորում ենք խոսքային միջոցներով (բնութագրական բառերը կարող են ասել գրքից, կամ գրված լինեն մի անկյունում, ընդ որում՝ յուրաքանչյուր բառ կունենա իր երանգը) և ստանալով գեղեցիկ պատկեր՝ կատարում ենք համեմատություն անգույն ու արդեն գունազարդված նկարների միջև՝ ակնառու դարձնելով անհրապույր խոսքի և գեղեցիկ խոսքի տարբերությունը: Տարրական դասարանում խոսքի զարգացմանը միտված աշխատանքներում պետք է ուշադրություն դարձնել նաև արտասանական վարժություններին (խոսքի տեմպ, ռիթմ, տրամաբանական շեշտ,): Աշակերտները պետք է հասկանան, որ անկենդան խոսքը, որը չունի արտահայտչականություն, չի կարող հաճելի լինել ունկնդրի համար: Աշակերտների խոսքի զարգացման, կապակցված խոսքի ձևավորման համար կազմակերպվում են տարբեր խոսքային իրավիճակներում խոսք կառուցելու, երկխոսություններ և մենախոսություններ ստեղծելու կարողություններին միտված աշխատանքներ, աշակերտներին հանձնարարվում է վերարտադրել ընթերցած նյութի բովանդակությունը, այն կարդալ դերերով, բեմադրել՝ կիրառելով խոսքային և ոչ խոսքային (դիմախաղ, կեցվածք, ժեստ և այլն) միջոցներ: Երեխաների ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար խմբային համագործակցության միջոցով հորինում ենք բանաստեղծություններ, զվարճալի պատմություններ, հեքիաթներ և այլն: Ջ. Ռոդարին աշակերտների ստեղծագործական երևակայությունը զարգացնելու համար առաջարկում է «ստեղծագործական երևակայության երկանդամության» տարբերակը: «Մի բառն այն ժամանակ է կենդանանում, երբ հանդիպում է մյուսին, որը դրդում, ստիպում է առաջինին սովորության սահմաններից դուրս գալու, իմաստային նոր հնարավորություններ բացելու...» [4, էջ 24]: Ռոդարին առաջարկում է ընտրել իմաստով իրարից շատ տարբեր 2 բառ և ձգտելով այդ 2 բառերի մեջ ստեղծել որևէ կապ՝ ակտիվացնել աշակերտների երևակայությունը (այդ բառերը կարող են ասել տարբեր աշակերտներ, վիճակահանություն կատարել և այլն): Կարծում եմ՝ այս տարբերակը բավականին կզարգացնի աշակերտների երևակայությունը և կխթանի ստեղծագործելու ցանկությունը, իսկ ուսուցումը կդառնա ավելի հետաքրքիր :

Երեխայի խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է նաև գեղարվեստական տարբեր ստեղծագործությունների ընթերցումը, որի նկատմամբ սերը դրվում է տարրական դասարանում: Գրքերի հետ երեխաների վճռորոշ հանդիպումը դպրոցական նստարանին է տեղի ունենում: Եթե այդ հանդիպումը ստեղծագործական մթնոլորտում է ընթանում, ուր գլխավորը կյանքն է, ոչ թե անգիր

անելը. ապա կարող է կարդալու համն առնե , հակառակ դեպքում «երեխան կարող է ընթերցանության տեխնիկային տիրապետել, սակայն կարդալու ճաշակ ձեռք չբերել» : Գրքերի թեման պետք էհամապատասխանի աշակերտների տարիքային առանձնահատկություններին և հետաքրքրություններին, լինի ոչ ծավալուն: Ընթերցանության և ուսուցման համար ընտրված թեմաները պետք է լինեն հայրենիքի, հերոսական սխրանքների, աշխատասիրության, բարեկամության, պատվախնդրության, բարության, ճշմարտախոսության, պատասխանատվության վերաբերյալ, որպեսզի ուսուցման ընթացքում հնարավոր լինի երեխայի անձի ձևավորումն իրականացնել բարոյական բարձր չափանիշներին համապատասխան:

Աշակերտների տրամաբանական մտածողության, հաղորդակցական կարողությունների ձևավորման նպատակով ևս պետք է կատարել տարբեր վարժություններ: Օրինակ՝ տեքստի խառնված նախադասությունների շտկում, պլանի կազմում և դրան համապատասխան պատմության հորինում: Տարրական դասարաններում ուսումնական նյութն անցնելիս ուսուցիչը սովորեցնում է դուրս գրել հերոսներին բնութագրող բառերն ու արտահայտությունները, ձևավորում հերոսների արարքների դրդապատճառը որոշելու

Այս մեթոդը փորձարկվել է 2018-19 ուստարվա արտադրական պրակտիկայի շրջանակներում:

կարողություններ, պահանջում բանավոր կամ գրավոր արտահայտել իրենց կարծիքը հերոսների վարքագծի կամ դեպքերի վերաբերյալ: Ուսուցչի կողմից պետք է մշակվի նաև խոսքային տարբեր իրավիճակներում համապատասխան տարբեր ոճերով կապակցված խոսք կառուցելու կարողություններ. էքսկուրսիաների, դիտումների միջոցով կառուցել նկարագրական խոսք բնության, այս կամ այն առարկայի կամ երևույթի վերաբերյալ՝ կիրառելով ստեղծագործական և երևակայական կարողություններ, կազմել դատողական խոսք կարդացածի կամ լսածի վերաբերյալ և այլն:Մեզ հետաքրքրող թեմայի շրջանակներում տարրական դասարաններում անհրաժեշտ է զարգացնել տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու կարողություններ: Նրանք պետք է կարողանան տեքստից առանձնացնել հերոսներին բնութագրող բառերն ու արտահայտությունները, բնության նկարագրության հատվածները, կարողանան հակադրել հերոսներին և նրանց արարքները, վերհանեն դրանց դրդապատճառները, դրսևորեն գնահատողական վերաբերմունք: Աշակերտները կարող են բանավիճել հերոսների վարքագծի, ինչպես նաև մինչ այդ իրենց ձեռք բերած փորձի և տեսակետների վերաբերյալ: Նրանք պետք է կարողանան տեքստի

բովանդակությունը վերարտադրել դատողական խոսքով, իրենց վերաբերմունքը հաստատելու համար բերել օրինակներ: Այս ամենը տարրական դասարաններում պետք է իրականացվի ուսուցչի ուղղորդմամբ, որպեսզի միջին դպրոցում աշակերտներն ավելի անկաշկանդ ու հիմնավորված կարողանան ներկայացնել իրենց տեսակետներն ու կարծիքները, նրանց խոսքը ունենա տրամաբանված կառուցվածք:

Խոսքի զարգացմանն ուղղված վերը նշված բոլոր աշխատանքները հետապնդում են մեկ նպատակ՝ զարգացնել աշակերտների պատկերացումները, ընդարձակել մտահորիզոնը, ձևավորել բարոյական վարքագիծ, իսկ սերնդի կրթության և դաստիարակության գործընթացն իրականացվում է հանրակրթական դպրոցում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կատարած հետազոտության արդյունքում գալիս ենք հետևյալ եզրակացությանը, որ երեխայի խոսքի զարգացումը մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Խոսքի շնորհիվ է տեղի ունենում երեխայի հոգեկան զարգացումը, սոցիալականցումը, ձևավորվում է նրա ներաշխարհը: Երեխան մայրենի լեզվի կրողն է :Նա լավ, թե վատ ,ճիշտ ,թե սխալ անընդհատ հաղորդակցվում է,ճանաչում ինքն իրեն ,իր շրջապատը,փորձում արտահայտել ու հասկանալ իր զգացածը ,տեսածը,լսածը: Այս ամենի արդյունքում էլ զարգանում է խոսքը, լեզվական հաղորդակցումը, շփումն ու փոխազդեցությունը անմիջական միջավայրի՝շրջապատի հետ, հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ գործունեությունը: Խոսքի զարգացումը բարդ և երկարատև գործընթաց է և պահանջում է բազմակողմանի նպատակաուղղված աշխատանք:

Այսպիսով, խոսքի զարգացումը ճիշտ կազմակերպելու դեպքում ,հնարավոր է հասնել այն բանի, որ երեխաները կկարողանան

- ակտիվ հաղորդակցվեն,
- կզարգացնեն երկխոսության մեջ մտնելու կարողությունը,
- կզարգացնեն հարցերը հստակ ձևակերպելու և ուղղելու կարողությունը,
- Իրենց ուղղված հարցերին կտան սպառիչ պատասխան
- առանց մեծահասակի օգնության կկարդան ոչ մեծ պատմվածքներ, հեքիաթներ,կհորինեն հանելուկներ ,կպատմեն նկարը,և կձևավորեն վերարտադրելու կարողությունները

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աթալյան Հր., Կապակցված խոսքի ուսուցման համակարգը, Եր., «Լույս», 1986, 184 էջ:
2. Ալեքսանյան Թ., Խոսքի ուսուցումը միջին դպրոցում, Երևան, Էդիթ Պրինտ հրատարաչկություն, 2012, 192 էջ:
3. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում, Ար., ԱՅՐԵՔՍ, 2004, Ոսկան Երևանցի հրատարակչություն, 288 էջ:
4. Արնաուդյան Ա. և ուրիշներ, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., 2004, 180 էջ: